ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2025 թվականի № 333-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, 17-րդ հոդվածի «ե» կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի № 41-Ա որոշման 6-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 11-ի ««Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 103-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

2. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 7-ի ««Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 95-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

3. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 8-ի ««Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 98-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

4. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 13-ի ««Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 114-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

5. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 26-ի ««Արգելի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը,

վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 135-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

6. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի ապրիլի 30-ի ««Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 89-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

7. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի ապրիլի 29-ի ««Բալահովիտի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 83-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

8. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի ապրիլի 29-ի ««Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 84-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

9. ՀՀ Կոտայքի մարզպետի ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի օգոստսի 20-ի ««Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 222-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

10. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի ապրիլի 29-ի ««Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 85-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

11. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 6-ի ««Ձառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 92-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

12. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 11-ի ««Ջովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 104-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

13. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 6-ի ««Կապուտանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության

կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 93-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

14. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 13-ի ««Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 115-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

15. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 5-ի ««Զորաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 91-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

16. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 20-ի ««Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 124-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

17. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 12-ի ««Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 107-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

18. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 7-ի ««Նոր Գեղիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 96-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

19. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 11-ի ««Պռոշյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 105-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

20. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 20-ի ««Ձրվեժի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 125-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

21. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մարտի 30-ի ««Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության

կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 55-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

22. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 8-ի ««Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 99-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

23. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 13-ի ««Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 116-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

24. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 7-ի ««Քանաքեռավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 97-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

25. ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 15-ի ««Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը, վերակազմավորման կարգը հաստատելու մասին» № 119-Ա որոշման № 1 հավելվածով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

26. Հաստատել կազմակերպությունների կանոնադրությունները՝ համաձայն հավելվածի:

27. Հանձնարարել կազմակերպությունների տնօրեններին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կազմակերպությունների կանոնադրություններում կատարված փոփոխությունները գրանցելու համար:

28. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 12
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2025 թվականի օգոստոսի 12-ի № 333-Ա որոշման

«Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2015 թվականի -ի № -Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« »

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. « » պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Պետական կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի « » փակ բաժնետիրական ընկերությունը /գրանցման համար՝ / վերակազմակերպելու միջոցով, վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը, որին էլ փոխանցվում են բոլոր իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերին համապատասխան:

2. Պետական կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

3. Պետական կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

4. Պետական կազմակերպության կառավարման լիազոր մարմինն է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետը (այսուհետ՝ Լիազոր մարմին), որն ունի Պետական կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

5. Պետական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամաններով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

6. Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում բացում է հաշիվներ:

7. Պետական կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

8. Պետական կազմակերպությունն այլ կազմակերպությունների հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

9. Պետական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել տեղական առողջապահական կազմակերպությունների և այլ հաստատությունների հետ:

10. Պետական կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

11. Պետական կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

12. Պետական կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ « » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հայերեն կրճատ՝ « » ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ « » ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОМЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

ռուսերեն կրճատ՝« » ГНО

անգլերեն լրիվ՝ « » STATE NOT COMMERCIAL ORGANIZATION

անգլերեն կրճատ՝ « » SNCO

13. Պետական կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, :

II. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

14. Պետական կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են.

1) բնակչության առողջության պահպանումը, բարելավումը,

2) առողջ ապրելակերպի քարոզչությունը,

3) հիվանդությունների կանխարգելումը,

4) պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը:

15. Պետական կազմակերպությունը կարող է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

16. Պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով, հիմնադրի որոշման հիման վրա, հանդիսանալ այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից:

17. Պետական կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

1) բժշկական օգնություն և սպասարկում (բացի պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման):

18. Պետական կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

III. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

19. Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, Լիազոր մարմինը, գործադիր մարմինը (այսուհետ՝ տնօրեն):

20. Լիազոր մարմինը՝

1) իրականացնում է պետական կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և կրում պատասխանատվություն դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

2) իրականացնում է վերահսկողություն պետական կազմակերպության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, կարգադրությունները և ցուցումները.

4) լսում է պետական կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության արդյունքները.

5) իրականացնում է վերահսկողություն պետական կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

6) օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս պետական կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձման համար.

7) հաստատում է պետական կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվեկշիռը, տարեկան ֆինանսական և այլ հաշվետվություններ.

8) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

21. Պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է պետական կազմակերպության տնօրենը, ով պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է (նրա լիազորությունները դադարեցվում են) լիազոր մարմնի հրամանով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր:

22. Տնօրենը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է պետական կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի, պետական կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2) Լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետական կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված գույքային վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չի հանդիսանում պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

3) Չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

4) Առանց լիազորագրի հանդես է գալիս պետական կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը, կնքում գործարքներ, տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի, լիազոր մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

6) Աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում պետական կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:

7) Կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև:

6) Սահմանում է պետական կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը:

7) Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

8) Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

IV. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

23. Պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռքբերված գույքից:

24. Պետական կազմակերպության ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից.

2) կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից.

3) Հայաստանի Հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից.

4) իրավաբանական և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ արտերկրի) կողմից կատարված ներդրումներից, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումներից, նվիրատվություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից.

5) Պետական կազմակերպության գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքներից.

6) կազմակերպության գույքից և գույքային իրավունքներից ստացված եկամուտներից.

7) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

25. Պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

26. Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

27. Պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է պետական կազմակերպությունը:

28. Պետական կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

29. Պետական կազմակերպության ֆինանսական գործունեությունը ենթակա է ֆինանսական վերստուգման (աուդիտի)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վերահսկողության այլ ստորաբաժանման կողմից:

30. Պետական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է ինքնուրույն՝ հիմնադրի կողմից սահմանված կարգով, իր առջև դրված նպատակների իրականացման համար:

31. Հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

32. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու կամ հանձնելու անհատույց օգտագործման:

33. Պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Պետական կազմակերպության գույքը վարձակալության է հանձնվում ՀՀ Կառավարության հաստատած կարգով:

34. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները և ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարները պետական կազմակերպության սեփականությունն են:

35. Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնելու ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

36. Հիմնադրի կողմից պետական կազմակերպությանը գույքն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

37. Հիմնադրի կողմից պետական կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի և (կամ) պարտադիր պետական գրանցման ենթակա գույքի նկատմամբ պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

V. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

38. Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

39. Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

40. Պետական կազմակերպության լուծարմամբ գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

41. Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով: Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

42. Պետական կազմակերպության լուծարման դեպքում պետական կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե:»: